

Գիտնականների կողմից կոչ Արցախում/Ղարաբաղում հայկական քրիստոնեական մշակութային արժեքների պաշտպանության համար

Ադրբեջանի կողմից գրավված Ղարաբաղի մշակութային արժեքների համար իրենց մտահոգությունը գիտնականներն արտահայտում են հետևյալ խոսքերով.

Կոչ Ղարաբաղում մշակութային արժեքների պաշտպանության համար

Որպես գիտնականներ, որոնք իրենց կապված են զգում առանձնապես հայոց եկեղեցու և հայկական մշակույթի հետ, մեզ անհանգստացրել է ոչ միայն Լեռնային Ղարաբաղում պատերազմի ընթացքը, այլ նաև այնտեղ ապրող մարդկանց ապագայի և մշակութային ժառանգության հարցը: Հայկական մշակույթի վտանգման նկատմամբ մենք չենք կարող անտարբեր լինել ոչ միայն այն պատճառով, որ սկզբունքորեն պետք է մշակութային փոքրամասնությունները պահպանվեն, այլ նաև, որովհետև Հայաստանի մշակութային ժառանգությունը պատկանում է մեր ընդհանուր քրիստոնեական ժառանգությանը: Մենք մերժում ենք պատմամշակութային ժառանգության գաղափարական վերամեկնաբանումը կամ ավերումը, հատկապես, երբ այն ծառայում է՝ որպես քաղաքական գործիք: Որպես քրիստոնյաներ՝ մենք համերաշխության պարտավորվածություն ենք զգում մեր հավատակից եղբայրների ու քույրերի հանդեպ, որոնց մշակութային ինքնությունը վտանգված է:

Այժմյան դրությունը փաստում է, թե որքան դժվար է լինելու պահպանել տարածաշրջանում հայերի ներկայության վկայությունները, հոգ տանել նրանց ժառանգության մասին և թույլ տալ արտերկրի գիտնականների մուտքը կարևորագույն վայրեր: Գաղափարական ճնշումներին հակազդելու համար, մեր կարծիքով, խիստ հրատապ է ցույց տալ ուղիներ, որոնք ապահովում են հայերի ներկայության ժառանգությունը: Որպես իրավիճակի բարելավման նախապայման՝ մենք ներկայումս հրատապ անհրաժեշտություն ենք համարում ձեռնարկելու բոլոր հնարավոր քայլերը թշնամացած ժողովուրդների հաշտեցման ուղղությամբ:

Ուստի մենք կոչ ենք անում՝

- պաշտպանել քրիստոնեական հուշարձանները վերափոխումից և ավերումից ու ապահայկականացումից,
- միջազգային գիտնականներին թույլ տալ՝ պաշտպանել տարածաշրջանի մշակութային ժառանգությունը,
- ապահովել ուխտավորների մուտքը քրիստոնեական վայրեր,
- վերջ տալ պատերազմական հեռուորաբանությանը

և առաջարկում ենք՝

- ձեռնարկել վստահության մթնոլորտ ստեղծող միջոցառումներ,
- խրախուսել այլ հաստատությունների՝ ցուցաբերելու դիրքորոշում,
- վանքերի, աստվածաբանության, բարեպաշտության, հակամարտությունների և խաղաղության վերաբերյալ հետազոտություններով (միջազգային ուղղվածությամբ

հրապարակումներով) խրախուսել սեմինարների և միջազգային գիտաժողովների կազմակերպումը:

Սույն կոչը շարադրվեց և ստորագրվեց մասնագիտական մի քննարկման (առցանց անցկացված) մասնակիցների կողմից, որը տեղի ունեցավ 2021 թ. մարտի 4-ին:

Կազմակերպիչներ՝

Պրոֆ. դր. Մարտին Թամբե, Գյոթինգեն

Պրոֆ. դր. Անդրեաս Սյուլլեր, Կիել

Քահանա, դր. Դագմար Հելլեր, Բենսհայմ

Մասնակիցներ՝

Դր. Մեխակ Այվազյան, Էրլանգեն

Պրոֆ. Արմենուհի Դրոստ-Աբգարյան, Հալլե

Պրոֆ. Հացիկ Բաֆֆի Գազեր, Էրլանգեն

Պրոֆ., դր. Մարտին Ջորջ, Բեռլին

Պրոֆ. Թերեզիա Հայնթհալեր, Ֆրանկֆուրտ

Դր. Հարություն Հարությունյան, Երևան

Դր. Թեսսա Հոֆման, Բեռլին

Դր. Արմեն Ղազարյան, Մոսկվա

Պրոֆ., դր. Կլաուս Կոշորկե, Սյունխեն

Քահանա Հաննա Լեհմինգ, Համբուրգ

Դր. Յոհաննես Օլդեման, Պադերբորն

Գեորգիոս Վլանտիս, աստվածաբանության մագիստրոս, Սյունխեն

Սյուս ստորագրողները՝

Սրբ. Թեյա Բեգրիխ, Սյուլհաուզեն

Պրոֆ. Թոմաս Բրեմեր, Սյունստեր

Դոցենտ, դր. Զիպրիան Բուրլաչյու, Սյունխեն

Դր. Ակսել Մայսներ, Շկեուդից

Դր. Աննա Բրիսկինա-Սյուլլեր, Հալլե

Պրոֆ., դր. Վոլֆգանգ Հեյզ, Մարբուրգ

Դր. Էրիկա, Ց. Դ. Հունտեր, Լոնդոն

Քահանա Քրիստիան Կուրցկե, Ռիդերսդորֆ/Մագդեբուրգ

Մարկուս Մեքել, Բեռլին

Պրոֆ. Դիմիտրիոս Մոսխոս, Աթենք

Դր. Ռիմա Նասրալլա, Բեյրութ

Արփիինե Պապիկյան, Գյոթինգեն

Պրոֆ. Կառլ Պինգերա, Մարբուրգ

Պրոպատ դր. Յոհան Շնայդեր, Հալլե

Պրոֆ. Մարտին Ուոլրաֆ, Մյունխեն

Պրոֆ., դր. Դրոթեա Վելթեքե, Ֆրանկֆուրտ

Ամարասի վանք, որը հիմնադրել է Գրիգոր Լուսավորչի (Հայաստանի «Լուսավորիչ») թոռը՝ Գրիգորիսը (մահացել է 338 թ.) 4-րդ դարում, և նրա գերեզմանը: Նրա մասունքներն ամփոփող շիրիմը մնացել է Ս. Գրիգոր եկեղեցու (19-րդ դար) աբսիդի տակ: Միջնադարում վանքը կարևոր մշակութային և կրթական կենտրոն էր: 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը (հայոց այբուբենի ստեղծողը) այստեղ հիմնադրեց քրիստոնյա Հայաստանի առաջին դպրոցը: Գտնվելով Ղարաբաղի Մարտունու շրջանում՝ վանքը վտանգավոր չափով մոտ է շփման գծին:



Դադիվանքը (նաև՝ **Խութավանք**՝ «բլրի վրա գտնվող վանք»), որը կառուցվել է 9-13-րդ դարերում, Քարվաճառի (Քելբաջար) շրջան: Հայտնի ուխտատեղին ներկայումս գտնվում է ռուս խաղաղապահների պաշտպանության ներքո:



Ծիծեռնավանքը (վանք-ամրոց), 5-րդ կամ 6-րդ դար, եռանավ բազիլիկայով





Կտիչ վանքը (9-10-րդ դարեր)



Ս. Եղիշե առաքյալի վանքը (4-րդ դար), Մարտակերտ



Սկզբնաղբյուր՝ [http://www.aqa-online.org/news/detail.php?locale=de&newsId=654:](http://www.aqa-online.org/news/detail.php?locale=de&newsId=654)